

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
34

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
34

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

34

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

**ԲՈՆԱԾԷՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԵԱՆ ՄԻ ՕՐԻՆԱԿ
(Մատենադարանի ձեռ. 10789)**

Բանալի բառեր՝ Բռնաշէն, Մոկս, Առաքել, Մխիթար, Վասպուրական, Խիզան, մանրանկարչութիւն, Օղակ, Աւետարան:

Մաշտոցեան Մատենադարանի ամէն ձեռագիր ունի իր անցած՝ դժուարին ու փորձութիւններով լի ճանապարհը: Նրանցից մէկը Հ^ր 10789 Աւետարանն է՝ որն, ըստ վերջին տիրոջ՝ պահուել է Մակու քաղաքում, պատկանել է Մակուի հայոց տանուտէր Ռէս Աւետիսին: 1828-1830 թթ. Մակու քաղաքի հայ բնակչութեան մի մասը (30 տուն) քաղաքի հայերի տանուտէր Ռէս Աւետիսի որդի Սարգսի գլխաւորութեամբ (նա է հօրից ժառանգել ձեռագիրը) բնակչութիւն է հաստատել ներկայիս Հրազդանի շրջանի Աղբիւրակ (հնում՝ Աղբերուկ) գիւղում եւ ժառանգականութեան իրաւունքով Ռուսաց տիրապետութեան մէջ եւս ճանաչուել տանուտէր-ուէս: Թէ՛ Մակուում եւ թէ՛ Աղբիւրակում հաւատացեալների շրջանում ձեռագիրը ճանաչուել է «Ռէսանց Աւետարան» անունով: 1920-1930-ական թուականներին ձեռագիրը անաստուածների ոտնձգութիւնից փրկելու նպատակով տէրերն ուխտաւորներին, աւելի ճիշտ՝ հաւանաբար նրանց անուամբ ծպտուած անաստուածներին յայտնել են, թէ կրօնական այդ հնութիւնը տարել են էջմիածին եւ յանձնել վանքին: Այս ձեւով փրկուած ձեռագիրը Ռէս Սարգսից յետոյ յաջորդաբար պահուել է նրա ժառանգներ Ռէսանց Բաբկէնի, Բաբկէնի որդի Վարդանի, Վարդանի որդի Սողոմոնի, Սողոմոնի որդի Գարուշի եւ Գարուշի որդի, գրականագէտ Խաչատուր Վարդանեանի² մօտ, որը եւ 1978 թ. ձեռագիրը յանձնել է Մատենադարան:

Ձեռագրի հիմնական տուեալներն են. «ԺԵ. դ. (1490 թ. յետոյ): [Մոկաց

* Մետրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, գիտաշխատող, յօդուածը ներկայացնելու օրը՝ հոկտեմբերի 13, 2022, գրախօսելու օրը՝ հոկտեմբերի 20, 2022:

¹ Վասպուրականի մանրանկարչական դպրոցի համար մեծ հետաւոբնութիւն ունեցող այս ձեռագիրն սկսել ենք ուսումնասիրել Մատենադարանի Ձեռագրագիտութեան բաժնի վարիչ, գլխաւոր աւանդապան Գեորգ Տէր-Վարդանեանի առաջարկով:

² Ինքը՝ Խ. Վարդանեանն էլ մեզ յայտնել է ձեռագրի այս նախընթացը:

Բռնաշէն³ գիւղ]: Գրիշ՝ Առաքեալ քոյ՝ որդի Մխիթար քոյի եւ Շարմանի: Ստացող՝ Թումայ տանուտէր»⁴: Գրչութեան ժամանակի յիշատակարանում (253բ-254բ) կարդում ենք. «...Եւ արդ, դարձեալ յիշեցէ՛ք ի Քրիստոս եւ զ[բազմա]մեղս եւ անարժան, սուտանուն գրիչս՝ Առաքեալ քոյի քանայ, եւ զձնողսն իմ՝ Մխիթար/ քանայ, եւ Շարման, որ փոխեալք առ Քրիստոս: Եւ հարազատ եղբարքս իմ՝ զՅովանէս քանայ եւ Մովսէս քանայ եւ զՄկրտիչ, իւրեանց կանայք եւ որդիքն: Եւ զկողակից իմ՝ Մոջան, եւ զորդիք մեր՝ զՎարդան եւ զՍտեփան[ն]ոս եւ զՍա[ր]գիս եւ Ասանէթ եւ Սիրումարք, եւ զհարեղբայր՝ Գրիգոր քանայ, եւ զամենայն արեան մերձաւորք մեր՝ կենդանիք եւ հանգուցեալք: Լի բերանով եւ ուղիղ մտաք, բ[ն]լոր սիրտիք Աստուած ողորմի՛ սասցէ՛ք եւ ի/// (1-2 բառ)[որ ողոր]մին ասէ /// (1 բառ) [ն]ղորմեսցի [առ հաս]սարակ, ամէն»:

ՄՄ 4123 ձեռագիրը 1466 թ. նոյն Բռնաշէն գիւղում գրել է Առաքելի հայր Մխիթարը. նա գլխաւոր յիշատակարանում իր ծնողների եւ զաւակների շարքում Առաքելին յիշատակում է որպէս «սարկաւազ»⁵: Ձեռագրի էջերն իրար կպած են եղել, նորոգման ժամանակ անզգոյշ են առանձնացրել, եւ մանրանկարների մեծ մասը, ցաւօք, վնասել են, այդուհանդերձ յստակ է, որ նրանց ոճը դարձեալ խիզանեան է (նկ. 1)*: Հօր եւ որդու՝ Մխիթարի եւ Առաքելի ձեռագրերի պատկերազարկան եւ ոճական աղբյուրներն ակնյայտ են:

Մխիթար գրչից մեզ հասել է նաեւ 1478 թ. գրուած մի Աւետարանի նկարագրութիւն⁶. այստեղ նա իր որդի Առաքելին յիշատակում է որպէս ձեռագրի ծաղկողի. «զԱռաքել քահանայն, որ ծաղկազարդեալ պայծառացոյց զսա», իսկ Յովհաննէս որդուն՝ որպէս ձեռագրի կազմողի: Այս յիշատակարանն արդէն փաստում է, որ մեր Առաքելը գրչութիւնից բացի տիրապետում էր նաեւ ծաղկելու արուեստին:

Երուանդ Լալայեանի ցուցակում Առաքելն իրեն գրիչ է յիշատակում 1490 թ. գրուած մի Աւետարանում. «...Արդ, գրեցաւ եւ կատարեցաւ աստուածախաւս եւ

³ «Բռնաշէն՝ գիւղ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Մոկլ գաւառակում, Սեպայ գետի աւազանում, Ս. Կանանց վանքի մօտ (կամ Մոկլի Ս. Կարապետ վանք, որտեղից մեզ ձեռագրեր են հասել): Միջին դարերում եղել է գրչութեան կենտրոն, պահպանուել են 15-րդ դարում գրուած հայերէն ձեռագրեր»։ տե՛ս Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, կազմ. Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, 3. Խ. Բարսեղեան, հ. 1, Երեւան, 1986, էջ 739:

⁴ Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ., Երեւան, 2007, էջ 114:

⁵ Ժե. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Մասն Բ. (1451-1480 թթ.), կազմեց՝ Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 249 (այսուհետեւ՝ Ժե. դ-ի յիշ-ք, Բ.):

* Այս և մյուս նկարները տե՛ս ներդիրում:

⁶ Տե՛ս նաեւ Յուցակ հայերէն ձեռագրաց Վասպուրականի, կազմեց Երուանդ Լալայեան, Հրատ. Հայոց Ազգագրական ընկերութեան, Պրակ առաջին, Թիֆլիս, տպ. էսպերանտո, 1915 (այսուհետեւ՝ Յուցակ Վասպուրականի): Ձեռագրի յիշատակարանը տե՛ս Ժե. դ-ի յիշ-ք, Բ., էջ 432:

լուսապայծառ եւ բարեվայելուչ եւ բարեխօս աշխարհի, հիւանդացն բժիշկ եւ քաւիչ մեղուցելոցս սուրբ Աւետարանս այս ձեռամբ անարժան եւ տխմար եւ անարուեստ գրչի Առաքել քահանայի, զոր ի վաղուց հետէ ցանկայր այսմ սուրբ եւ աստուածախաւս Աւետարանիս... Յիշեցէք եւ զիս՝ բազմամեղս, ունայն ի բարեաց Առաքել քահանայ, [որ] ըստ տկարութեանս գրեցի սուրբ Աւետարանս ի յերկիր Մոզկաց, ի գեաւղն որ կոչի Բռնաշէն, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Կարապետին, եւ Գէորգեայ զարավարին, ի թուականութեան Հայոց ՋԼԹ. (1490): Եւ արդ, ես՝ Սահակ կրօնաւորս, ետու սուրբ Աւետարանս ի Սուրբ Նշանիս Ալանայ, ի յիշատակ հոգւոյ իմոց... Սուրբ խաչին, տանի Յայտնութեան եւ Աւագ զատկին՝ զյիշատակարանս կարգաք»⁷: Նոյն ձեռագրի մասին յիշատակութիւն կայ նաեւ Դ. վ. Փիրղալէմեանի «Նշխարք պատմութեան Հայոց» ժողովածուի մէջ. «ՆԼԵ. Աւետարան (մականուն՝ Քօշահան), ՋԼԹ. եւ 1490, Բռնաշէն գիւղ (Մոկաց երկիր), գրիչ՝ Առաքել քհն, ստացող՝ մահդաւի Սահակ քհն: «1866 Մայ. 1 կիրակի ի Վան՝ Կենդանանց»» (ՄՄ 6273, 212բ-3ա)⁸:

Մեր Առաքելի մի այլ յիշատակարան էլ գտնոււմ ենք Աւետնդ վ. Փիրղալէմեանի նոյն ժողովածուի երկրորդ հատորում. «...Արդ, կատարեցաւ աստուածախօս Աւետարանս ձեռամբ անարժան եւ տխմար գրչի Առաքելի, ի խնդրոյ պատուական տանուտիրոջ Յովհաննէսի... Գրեցաւ սուրբ Աւետարանս ի յընտիր եւ ի լաւ օրինակէ, ի յերկիրս Մոկաց, ի գեօղս որ կոչի Բռնաշէն, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Կարապետին, եւ Գէորգայ զօրավարին, ի դառն եւ ի նեղ ժամանակիս, ի թուականութեանս Հայոց ՋԽԳ. (1494): Արդ, աղաչեմ զսրբութիւնդ ձեր՝ յիշեցէք զառաջին եւ վերջին ստացող սուրբ Աւետարանիս զՅովհաննէս եւ զՋաքար...»⁹:

Մեր ձեռագրի պատուիրատուն Թումայ տանուտերն է. «...Եւ ետուր գրել սուրբ Աւետարանս իմաստուն եւ բարխէր Թումայ եւ կողակից իւր Ջուայր եւ գհայր Շիրին եւ Եղիսայ՝ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողացն եւ ասէ, զի՝ Սայ եղիցի ինձ զաւակ յայսմ աշխարհի վաստակի ողորմիլ... Քրիստոս Աստուած ողորմի ստացողի՝ գնողիս սուրբ Ա[ւ]ետարանիս՝ Թումայ, եւ գնեաց ի յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողաց իւրոց. ամէն» (253բ-254բ):

Բացի 1478 թ. ծաղկած Աւետարանից, Լալայեանի եւ Փիրղալէմեանի յիշատակած 1490 թ. եւ Փիրղալէմեանին յայտնի 1494 թ. Աւետարանից, Առաքել գրիչը 1490 թ. Մոկսի Բռնաշէն գիւղում գրել է նաեւ Նոր Ջուղայի Ս. Ամենափր-

⁷ Յուցակ Վասպուրականի, ձեռ. Հ^մ 210, սիւն. 515-516:

⁸ Այս տեղեկութիւնը շնորհակալութեամբ ստացել ենք Մատենադարանի գիտաշխատող Յասմիկ Իրիցեանից: Տե՛ս նաեւ՝ Ժե. դ. յիշ. -ք, Գ., էջ 156, Հ^մ 201:

⁹ ՄՄ 4515, էջ 236. հմմտ. Ժե. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1967, էջ 203, Հ^մ 274:

կիչ վանքի Հ^մ 76 Աւետարանը¹⁰, ուր նրա մայրը ողջ է, իսկ մեր ձեռագրում ծնողները հանգուցեալ են («փոխեալք առ Քրիստոս»), հետեւաբար մեր ձեռագիրը պէտք է գրուած լինի 1490 թ. յետոյ: Նոր Զուղայի ձեռագրի յիշատակարանում հանգուցեալ է յիշատակուած գրչի հայրը. «Մխիթար քահանայ, որ փոխեալ առ Քրիստոս»¹¹: Յիշատակարանում Առաքել գրիչը նշում է նաեւ, որ ձեռագրի մեկենասներ «Դաւլաթի եւ Հաթուն մելիքի» կամքի համաձայն՝ Աւետարանը յանձնել է Ոստան քաղաքի Ս. Ստեփանոս եկեղեցուն:

Զենք բացառում, որ մեր ձեռագրի ստեղծման վայրը դարձեալ Բոնաշէնն է՝ հաշուի առնելով գրչից՝ մեզ հասած ձեռագրերի ստեղծման վայրը, բայց ծաղկողի հարցը պարզելն աւելի դժուար է:

Նոր Զուղայի օրինակում ծաղկողի ձեռքը շատ աւելի վստահ է. վարժ տիրապետում է գծանկարին, կերպարների դէմքերի եւ մարմինների յարաբերակցութիւնը շատ աւելի իրատեսական է, քան մեր ձեռագրում, որտեղ կերպարների գլուխներն աւելի մեծ են եւ կլորաւուն՝ ընդգծուած այտերով: Առաւել հակուած ենք կարծելու, որ Բոնաշէնում գրուած՝ Նոր Զուղայի օրինակը մեր ձեռագրի հետ միասին ունեցել են նոյն նախօրինակը (նկ. 2):

Ահա այստեղ մեզ օգնութեան եկաւ մի յօդուած, որտեղ Մատենադարանի գլխաւոր աւանդապահ Գ. Տէր-Վարդանեանը նկարագրել է Բոնաշէնում 1477 թ. գրուած՝ մասնաւոր հավաքածուի մի ձեռագիր¹², որի գրիչը Մխիթարն է, իսկ ծաղկողը՝ Առաքելը, որի ինքնագիմանկարը կայ «Քրիստոս չորեքկերպեան գահին» տեսարանի ներքեւում՝ ձեռագրի պատուիրատու մահդասի Սառայի կողքին: Շատ կարեւոր է, որ Մատենադարանում նաեւ կայ այս ձեռագրի ժապավէնը, որի քննութիւնը, թէեւ սեւ եւ սպիտակ լուսանկարներով, թոյլ կտայ պարզելու Առաքելի՛ մեր ձեռագրի ծաղկողը լինելու հարցը:

Յստակ է, սակայն, որ այս ձեռագրերի ծաղկողը կամ ծաղկողները ծանօթ են եղել ինչպէս Խիզանի, այնպէս էլ Ոստանի եւ Աղթամարի գրչութեան ու մանրանկարչութեան աւանդոյթներին:

Մեր ձեռագիրը սկզբում եւ վերջում ունի զոյգ պատառիկներ, որոնցից Բբ էջում հետագայի յիշատակարան է: Զեռագրի պատկերազարդման համակարգը աչքի է ընկնում վասպուրականեան մանրանկարչութեան առանձնայատկութիւններով: Այստեղ մեզ արդէն յայտնի պատկերատիպերն են, որոնք ոճական

¹⁰ Յուցակ հայերէն ձեռագրաց նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա., կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, Մխիթ. տպ., 1970, էջ 112, ցուցակի ձեռ. Հ^մ 76: Այս ձեռագրից լուսանկար տրամադրելու համար շնորհակալութիւն եմ յայտնում նոր Զուղայի Ամենափրկիչ վանքին եւ յատկապէս ձեռագրատան պատասխանատու պարոն Թովմային:

¹¹ Նոյն տեղում, էջ 112:

¹² Օ. Եգանեան, Գ. Տէր-Վարդանեան, Յուցակ հայերէն ձեռագրաց մասնաւոր անձանց, ԲՄ, 14, 1984թ., էջ 257-266:

եւ պատկերագրական առանձնայատկութիւններով, յատկապէս անուանաթերթերի մշակմամբ յատկանշական են Խիզանի մանրանկարչական դպրոցին:

Ձեռագրի 1ա էջում Աբրահամի զոհաբերութեան տեսարանն է, որտեղ արդէն աչքի են ընկնում կերպարների վասպուրականեան աչքերը, բաւական ոճաւորուած մարմինները (նկ. 3): Իսահակը պատկերուած է պայմանական մշակմամբ զոհասեղանին՝ սկիհ յիշեցնող, պատկերագրական դիրքը՝ ծալապատիկ եւ կապուած ձեռքերով: Աբրահամը մեզ յայտնի հիմնական պատկերատիպով է՝ թեքուած դէպի Աստուծոյ խոյը, Իսահակի մագափունչը ձեռքին: Նմանօրինակ է նաեւ Բռնաշէնի՝ Նոր Զուղայում պահուող ձեռագրի նոյն տեսարանը, հիմնական տարբերութիւնը Իսահակի զոհասեղանն է՝ խաչուած ոտնակներով, ինչպէս նաեւ պատկերների մշակումը՝ աւելի ճկուն եւ համեմատաբար՝ համաչափ: Աբրահամի զոհաբերութեան այս տեսարանը, այսպէս ասած, պատկերագրական հիմնական կանոնի մէջ է: 1477 թ. ձեռագրում Առաքել ծաղկողը չի պատկերել այս տեսարանը, այլ նկարագարդումը սկսել է «Գուշակումն մարգարէից» տեսարանով:

Իբ էջում Աւետումն է, որտեղ Աստուածածինը պատկերուած է նստած՝ իլիկ մանելիս, Գաբրիէլ հրեշտակապետը՝ օրհնող դիրքով (նկ. 4): Կերպարներն աչքի են ընկնում ձգուած համաչափութիւններով եւ մեծ գլուխներով: Մեր ուշագրութիւնը գրաւեց լուսապսակների սեւ թանաքով ուրուագծումը, ինչպէս նաեւ «հրեշտակապետ» եւ «Ա. Աստուածածին» մակագրութիւնները, որոնք, հաւանաբար, թարմացուել են հետագայում: Նոյն սեւ թանաքով ուրուագծումները կան նաեւ միւս կերպարների, յատկապէս լուսապսակի եւ հագուստի ծալքերի մէջ: Առաքելի 1477 թ. ծաղկած ձեռագրում այս տեսարանը ոճական առումով աւելի նման է Նոր Զուղայի ձեռագրին: Մեր օրինակի հետ եւս կայ ոճական նմանութիւն, ինչպէս օրինակ, հրեշտակի մագերի, մատների, հանդերձանքի մշակման հարցում, սակայն մեր կերպարների մշակումները այնքան էլ վարպետօրէն չեն արուած. գլուխներն աւելի խոշոր են եւ անհամաչափ: Այս նոյն տեսարանում նաեւ Յովսէփի երազն է: Առաքելի բոլոր մանրանկարներն ունեն նախշազարդ-ծաղկազարդ խորք, հիմք՝ ի տարբերութիւն մեր եւ Նոր Զուղայի օրինակների:

Տէրունական տեսարանների հերթականութիւնը խախտուած է: Աւետումից յետոյ Համբարձումն է, ապա Հոգեգալուստը, որից յետոյ շարքը վերականգնուում է Մնունդով: Սա, հաւանաբար, հնում արուած նորոգման ընթացքում թերթերը սխալ կարգով կարելու հետեւանք է:

Համբարձման եւ Հոգեգալստի տեսարանները հիմնական պատկերատիպերով են (նկ. 5): Այս տեսարաններն ակնյայտ պատկերագրական ընդհանրութիւններ ունեն 1477 թ. ձեռագրի հետ, սակայն Առաքելի ծաղկած ձեռագրում յստակ տարբերում են պատկերուածների յօնքերի, աչքերի մշակումները, մարմիններն աւելի ճկուն են, համեմատաբար՝ համաչափ: Առանձնայատուկ հե-

տաքրքրութիւն ունի Ծննդեան տեսարանը, որն ամբողջական պատկերատիպով է՝ ձիաւոր մոգերով, հինգ հրեշտակներով, եւ, ինչը շատ աւելի հետաքրքիր է, հինգ հովիւներով (նկ. 6): Հովիւների այս քանակը շատ հետաքրքիր առանձնայատկութիւն է եւ հանդիպում է Կապաղովկիայի ժայռափոր եկեղեցիների որմնանկարներում, յատկապէս այն եկեղեցիներում, որոնք ստեղծուել են հայկական աւանդոյթների ազդեցութեամբ¹³: Պատկերագրական այս առանձնայատկութիւնը Կապաղովկիա-Վասպուրական մշակութային փոխյարաբերութիւնների եւ Կապաղովկիայում հայերի գործունէութեան հերթական մի դրսեւորում է: Աչքի են ընկնում հովիւներից երկուսի գլխարկները, որոնք, հաւանաբար, տուեալ ժամանակաշրջանի առանձնայատկութիւն են: Յովսէփը պատկերուած է մոգերին մտորը ցոյց տալիս: Ձիերն էլ աչքի են ընկնում հետաքրքիր պատկերատիպերով, որոնք իրենց զուգահեռներն ունեն վասպուրականեան օրինակներում¹⁴: Հետաքրքիր է նաեւ, որ այստեղ չկայ «Մանկան լոգանքի» բուն դրուագը, բայց կան տատմայրերը, որոնք մտորի մօտ են՝ արտայայտիչ շարժուածելով: Այս դրուագը պարականոն գրականութեան ազդեցութեան հետեւանք է, ինչը տեսանելի է յատկապէս Վասպուրականի մանրանկարչութեան մէջ: Յովհաննէս Խիզանցու ՄՄ 4223 եւ ՄՄ 5562 ձեռագրերի եւ Ծերուն ծաղկողի ՄՄ 8772 ձեռագրի Ծննդեան տեսարանի յատկապէս մոգերի դրուագի հետ բազմաթիւ ընդհանրութիւններ կան, կարծես մեր ձեռագրի ծաղկողը ծանօթ լինի այս օրինակներին (նկ. 7): Երկու դէպքում էլ լուսապսակով Յովսէփը ձեռքի շարժումով ցոյց է տալիս մտորը, ընդհանրութիւններ ունեն նաեւ մոգերի հանդերձները, գլխազարդերը եւ ընծաները: Նմանօրինակ են պատկերուած նաեւ մոգերի ձիերը՝ շարժման մէջ եւ արտայայտիչ: Ինչպէս ասացինք, հրեշտակները եւս հինգն են, ինչը շատ բնորոշ է վասպուրականեան պատկերատիպին: Առաքելի ծաղկած Ծննդեան տեսարանի հետ մեր օրինակն ակնյայտ տարբերութիւններ ունի:

Յաջորդում են Ընծայումն տաճարին, Մկրտութիւն (երեք հրեշտակով) եւ Պայծառակերպութիւն տեսարանները:

Յատկապէս ուշագրաւ է Հարսանիք Կանայում տեսարանը, որտեղ Քրիստոս օրհնող ժեստով ձեռքը պարզել է մի կերպարի վրայ, որի ձեռքին գինով լի բաժակ է: Այսպէս սովորաբար պատկերուում է տաճարապետը կամ սեղանապետը՝ համապատասխան գրութեամբ: Այս տեսարանի պատկերատիպում յաճախ ընդգծուում է ջուրը գինի դարձնելու դրուագը, որտեղ Քրիստոս լինում է սափորների մօտ՝ ծառայի ուղեկցութեամբ: Սակայն այստեղ Վասպուրականի համար

¹³ Այս մասին առաւել մանրամասն տե՛ս Ս. Մանուկեան, «Վասպուրականի գեղարվեստական ավանդոյթների եւ Կապաղովկիայի մոնումենտալ գեղանկարչոյթյան աղբիւրները», էջմիածին, 2015, շնչ. Ը., էջ 109:

¹⁴ Յատկապէս ճետաբերի գուգանետ է Ծերուն ծաղկողի 1391 թ. Աւետարանի համաճումն օրինակը:

առաւել նախընտրելի տարբերակ է: Ներքեւի ձախ անկիւնում՝ փեսայի կողքին, լուսապսակով հոգեւորականի մի պատկեր է ծնծղայով: Տեսարանում առկայ է նաեւ երաժշտի մի պատկեր, լարային գործիքով, հաւանաբար՝ սազով¹⁵: Տեսարանում ներկայ են եւս երկու կերպար, մէկը՝ գինի խմելիս, միւսը՝ ձեռքը գլխին, երկուսն էլ հետաքրքիր գլխազարդով են, հաւանաբար հիւրերն են: Վերջին երկու կերպարի՝ պատկերագրական համակարգի մէջ ընդգրկելն առաւել բնորոշ էր Վասպուրականի մանրանկարչութեանը: Առաքելի ծաղկած օրինակի հետ պատկերագրական եւ ոճական տարբերութիւնները յստակ են:

Այս տեսարանի հետ պատկերագրական մի շարք ընդհանրութիւններ կան վասպուրականեան ժն. դարի ՄՄ 5511 ձեռագրում, յատկապէս փեսայի պատկերատիպում: Այս կերպ յաճախ արտայայտուում է տուեալ ժամանակի ոգին. գործիքներով երաժշտները, տարազները եւ միջավայրը: Մեր օրինակում խաչ յիշեցնող ծնծղան կամ գաւազանը լուսապսակով հոգեւորականի ձեռքում է: Այս ձեռագրում փեսան լուսապսակով է, իսկ մեր ձեռագրում՝ ոչ:

Յովհաննէս Խիզանցու ՄՄ 4223 ձեռագրում եւս տեսարանների ժամանակագրական կարգը խախտուած է: Հարսանիք Կանայում տեսարանը ուշագրաւ է նրանով, որ բոլոր կերպարները լուսապսակով են: Քրիստոսի դիմաց պատկերուած լուսապսակով կերպարի վերելում գրուած է՝ «Տաճարապետն», իսկ մեր օրինակում թիկնոցով եւ գլխազարդով պատկեր է (նկ. 8ա, բ, գ): Յովհաննէս Խիզանցու, ինչպէս նաեւ Վասպուրականի բազմաթիւ այլ օրինակներում, փեսան թրով է:

Մէկ էջում երկու տեսարանով է նաեւ անդամալոյծի բժշկումը եւ Պետրոսի անհաւատութիւնը: Այս տեսարանից յետոյ դարձեալ պատկերների ժամանակագրական խախտում ունենք: Դիմացի էջում Ահեղ դատաստանը բաւական պարզ մշակմամբ է՝ Քրիստոսը վերին աջ անկիւնում է՝ հրեշտակներով, մի փոքր ցած անմեղներն են, իսկ տեսարանի ներքեւում մեղաւորների աղաւաղուած կերպարներն են: Այս տեսարանի աւելի ընդարձակ եւ մանրամասն մշակում 1477 թ. ձեռագրում է, որը դարձաւ վկայում է Առաքել ծաղկողի հմտութեան մասին: Մեր էջի դարձերեսին Ազգարարումն երկրորդ գալստեան պատկերն է. խաչի պատուանդանի մօտ կան հինգ տղամարդ՝ գունաւոր հանդերձներով, իսկ ձախ կողմում, պատկերներից վեր, կնոջ նկար է առանց գունաւորման (նկ. 9): Խաչի պատուանդանի աջ կողմում տղամարդու երկու պատկեր է, ձախից՝ երեք կերպար է, սակայն ձեռագրի բուն յիշատակարանում պատուիրատուն յիշատակուում է կնոջ եւ ծնողների հետ: Մեզ յայտնի չէ, թե ովքեր են պատկերուած Թումայի հետ:

Ձեռագրի 9ա էջում կայ հետագայի՝ ԺԶ. դարից ոչ ուշ գրուած մի փոքրիկ

¹⁵ ՄՄ 346 ձեռագրի 280ա էջում Գալիթ մարգարէն եւս սազով է պատկերուած՝ Խիզանի դպրոցին բնորոշ թագով եւ կերպարի մշակմամբ:

յիշատակարան. «...Անթառամ ծաղիկն Յիսուս, որ ծաղկեցաւ լուսովն աստուածութեամբն, ի Թաբար լերին, եւ զանմահութեան հոտն բուրեաց տիէզերաց եւ կանաչացեալ վայելչութեամբ եւ ցաւոյով անմահութեան զըւարճացեալ դասք առաքելոցն: Աւրհնեսցէ Տէր Աստուած մեր աննուաղելի փայլմամբ հոգով եւ մարմնով, տամ[բ] եւ տեղաւք, որդովք եւ զ/// (5-6 տառ)ւք եւ զաւակաւք եւ ամենայն գոյիւք՝ զՅովանէս քահանայն եւ զիւր հօրեղբայր զԴաւիթ մաղղասին, եւ զիւր եղբայրքն՝ զՀէրայպետն, զՍաւահն եւ զԹումէն, եւ զգեղեցիքս. ամէն: Որ կամակից եղան, Սուրբ Աստուածածնի պարիսպն շինեցին, Արարիչն Աստուած զՅովանէս քահանայն եւ զիւր եղբարքն եւ զգեղի քահանայքն եւ զտանուտէրքն եւ զՅակոբ քահանայն արհնէ. ամէն»¹⁶:

Ղուկաս աւետարանչի նկարը եւ անուանաթերթը յստակ տարբերում են ձեռագրի միւս աւետարանիչների պատկերներից եւ մատնում են ձեռագրում երկրորդ ծաղկողի առկայութիւնը: Կարծում ենք նաեւ, որ այդ ծաղկողների միջեւ ժամանակագրական մեծ հեռաւորութիւն չկայ: Առաքելի ծաղկած ձեռագրի աւետարանիչների պատկերները պատկերագրական աղերսներ ունեն մեր օրինակի հետ, սակայն ոճական տարբերութիւնները մատնում են այլ նկարչի ներկայութիւնը:

Աւանդական պատկերատիպով է նաեւ էջք ի դժոխս տեսարանը, որտեղ Քրիստոս ազատում է Ադամին, իսկ սատանան մարդադէմ, ոճաւորուած գազանի տեսքով է: Անսովոր պատկերագրութեամբ աչքի է ընկնում Յարութեան տեսարանը, որտեղ ներկայ են նաեւ Քրիստոս եւ իւղաբեր կանայք, որոնք, ըստ լուսապսակների քանակի, տասնմէկն են (նկ. 10), ինչն անսովոր պատկերատիպ է, որը չկայ նաեւ 1477 թ. ձեռագրում:

Յարութեան նկարին, խախտուած հերթականութեամբ, յաջորդում է Քրիստոսի ձեռքակալման տեսարանը՝ մի քանի դրուագով, նաեւ Պետրոսի ուրացման դրուագը: Դարձերեսին խաչելութիւնն է Քրիստոսի անսովոր պատկերատիպով: Տեսարանը հիմնական պատկերագրական մշակմամբ է՝ աւելի արխայիկ, քանի որ Քրիստոս փակ աչքերով է, արդէն մահացած, բայց դէմքը առանձնանում է հրաշալի արտայայտչականութեամբ, յատկապէս թարթիչների մշակման շնորհիվ, ինչը սակաւադէպ է Քրիստոսի պատկերատիպում: Աչքի են ընկնում այս տեսարանի կերպարների, յատկապէս Աստուածածնի եւ Յովհաննէսի յօնքերի

¹⁶ Յիշատակարանների ընթերցման եւ ձեռագրի նկարագրման համար շնորհակալութիւն եմ յայտնում Մատենադարանի գիտաշխատակից Գոհար Չատեանին: Ձեռագրի մէջ կայ հետազայի մի ֆանի յիշատակարան եւս, որոնք տեղեկացնում են հետազայ ստացողի մասին. 14բ-15ա էջերում կարդում ենք. «...ստացաւ զսա ուսթա Յովսէփն ի հալալ արդեանց իւր...», այստեղ նշում է նաեւ փոյրերին, եղբայրներին, որոնց անունների մի մասը վնասուած է: 77ա էջում էս հետազայի յիշատակարան կայ, իսկ 216բ-217բ էջերում թոյլ թանախով եւ անփոյթ գրով հետազայի գրչափորձեր են:

մշակումը, սկզբի հատուածում՝ շեշտուած սուր անկեամբ, նաեւ կարմիր ստուերաներկով, որը կայ նաեւ կերպարների այտերին: Նման մշակման փորձ կայ նաեւ միւս տեսարաններում, սակայն պակաս ընդգծուած, աւելի շատ տպաւորութիւն է, որ հիմնական գոյնի վրայ կարմիրով ընդգծել են: Այս տեսարանը, հավանաբար, պատկերագրական նախատիպ է ունեցել Առաքելի ծաղկած ձեռագրի նոյն տեսարանը:

Ընդհանուր առմամբ, պատկերները մշակուած են Վասպուրականի ԺԳ.-ԺԵ. դարերի մանրանկարչութեանը բնորոշ առանձնայատկութիւններով. ընդգծուած դիմագծերով՝ նշածեւ աչքերով, սնգոյրած այտերով, ձգուած համաչափութիւններով: Մեր ձեռագրի դէպքում՝ բաւական մեծ գլուխներով, մի շարք մանրամասների պայմանական մշակմամբ, անխառն, մաքուր գոյներով: Բայց, միեւնոյն ժամանակ, մշակումների պարզութիւնը նպաստում է կերպարների առաւել արտայայտչականութեանը: Խիզանի մանրանկարչութեան օգտին են վկայում յատկապէս ճոխ անուանաթերթերը, որոշ դէպքերում ճակատագարդի՝ մարդադէմ մշակմամբ, որը շատ մօտ զուգահեռներ ունի 1390-1400 թթ. Խիզանում գրուած մի Աստուածաշնչի անուանաթերթերի հետ (ՄՄ 346, 2ա, նկ. 11):

Լուսանցային զարդանկարչութիւնը լի է բուսական նախշերով, յուշկապարիկների, թռչուն-ձուկ պատկերներով, նաեւ՝ տաճարներով: Զարդագրերի մէջ առանձնանում են մարդադէմ տառերը: Բացի այդ, կան նաեւ լուսանցային մանրանկարներ, երբեմն երկու հանդիպակաց էջերի վրայ, օրինակ Մկրտութեան տեսարանում 19բ էջում Յովհաննէս Մկրտչի պատկերն է, իսկ 20բ էջում Քրիստոսն է: Զեռագրի 122բ էջում Զաքարիայի Աւետման դրուագում Գաբրիէլ հրեշտակապետի լուսանցապատկերն է, 124ա էջում, որոնք իրականում պէտք է լինեին իրար առջեւ՝ Մարիամ Աստուածածնի եւ Եղիսաբեթի պատկերներն են, որտեղ Աստուածածինը այցի է եկել Եղիսաբեթին: Առանձնայատուկ հետաքրքրութիւն ունի Եղիսաբեթի ծալապատիկ դիրքը՝ նստած մութաքայի վրայ, որը յուշում է նկարչի՝ արեւելեան միջավայրին ծանօթ լինելու մասին: 125ա էջում Աւետումն է՝ միայն Աստուածածնի լուսանցապատկերով:

Այս ձեռագրի լուսանցային նկարագարողումներն առանձնայատկութիւններ ունեն. օրինակ՝ Աստուածածնի եւ Յովսէփի՝ Եգիպտոս փախուստի դրուագի լուսանցում փղի վրայ պատկերուած մի մարդ է՝ հովուի գաւազանով (127ա): Հետաքրքրական է նկարագարողումը նաեւ 127բ եւ 128ա էջերում, որտեղ մի քանի տեսարան մէկտեղուած է լուսանցային մանրանկարների տեսքով: 127բ՝ սրնգահար հովուի պատկեր է, բնորոշ վասպուրականեան ոճին, իսկ 128ա՝ լուսանցի վերնամասում Աստուածածինն է՝ մանկան հետ նստած, ապա մի փոքր ներքեւ Սիմէոն ծերունին է՝ զոյգ թռչուն գրկում՝ որպէս Ընծայումն տաճարի տեսարանի խորհրդանիշ: Պատկերները միայն շագանակագոյն եւ կանաչ ուրուագմամբ եւ երանգաւորմամբ են, արտայայտիչ դիմագծերով: 129բ էջի լուսանցում Աստուածածնի պատկերն է, սակայն դիմացի շարադրանքը տաճարում քարո-

զող տասներկուամեայ Քրիստոսի մասին է: 133ա էջի նկարազարդումը եւս ուշագրաւ է. վարպետորէն մշակմամ յուշկապարիկի լուսապսակի անմիջապէս վերեւում Ս. Հոգու աղանակերպ պատկերն է՝ խաչակերպ լուսապսակով: 135բ եւ 136ա էջերի բնագրով մէկ ձկների պատկերներ են, որտեղ ներկայացուած է ձկնորսների վերադարձը ծովից եւ Քրիստոսի ու Սիմովն-Պետրոսի զրոյցի դրուագը:

165ա էջի լուսանցում Սապատաւոր կնոջ բժշկումն է, որը դարձեալ համառօտ մշակմամբ է, միայն ներկայացնում է ձեռնափայտով կնոջը: 178ա էջում կոյրի բժշկման տեսարանն է, որտեղ կոյրը պատկերուած է ճանապարհի վրայ, ծառի տակ նստած՝ առաջ պարզած ձեռքերով: Սակայն մեր ուշագրութիւնը գրաւեց այն, որ կոյրը լուսապսակով եւ բաց աչքերով լինել չի կարող, աւելի նման է Քրիստոսի պատկերին: Շատ հաւանական է, որ ծաղկողն այստեղ Քրիստոսին է պատկերել, քանզի կոյրի՝ ծաղկողի պատկերատիպը միանգամայն տարբեր է: Կարծում ենք կոյրի փոխարեն Քրիստոսի պատկերումը պատահական չէ. ձեռքերն առաջ պարզած Քրիստոսն իր մօտ է կանչում բոլոր նրանց, ովքեր բժշկման կարիք ունեն:

193ա էջում եւս կայ ժամանակագրորէն իրարայաջորդ շատ ուշագրաւ երկու տեսարան. լուսանցի ներքեւում Յովսէփ Արիմաթացին է, որ Պիղատոսից խնդրեց Քրիստոսի մարմինը, իսկ Յարութեան տեսարանը բնագրային մանրանկարի տեսքով է, որտեղ Քրիստոսի դատարկ գերեզմանի մօտ հրեշտակն է, գերեզմանի վրայ խոնարհուել է աշակերտներից մէկը, իսկ միւսը՝ աւելի երիտասարդը, կանգնած է նրա ետեւում: 198ա էջում լուսանցքի բուսական նախշի մէջ Հայր Աստուածն է, գրկում՝ մանուկ Քրիստոսը՝ խաչակերպ լուսապսակով:

205բ էջում Ս. Հոգու պատկերն է, բուսական նախշի վրայ՝ դարձեալ խաչակերպ լուսապսակով: 222ա էջում ի ծնէ կոյրի պատկերն է՝ հմտորէն մշակուած հագուստով, գաւազան յիշեցնող ձեռնափայտով, գլխարկի՝ շատ հետաքրքիր պատկերատիպով: Կոյրի ձեռքին թաս է, հաւանաբար, լի կաւով, որով Քրիստոս պատեց նրա աչքերը, ապա նա բժշկուեց:

235բ, 237ա, 238բ, 239ա էջերում բուսական նախշեր են, որոնք, կարծես, արուած լինեն աւելի ուշ եւ այլ ձեռքով: 248ա էջից սկսած ուղղագիծ, կանոնական գիրը փոխուած է. տառերի ստեղներն աւելի կլորաւուն են դառնում, աւելի խոշորանում, հաւանաբար, գրչափոխութեան արդիւնք է, այսինքն՝ կարծում ենք, որ նոյն մարդը, գրել է այլ գործիք-գրիչով:

Համեմատական քննութիւնը Առաքելի ծաղկած ձեռագրի լուսանցազարդերի եւ լուսանցանկարների հետ հերթական անգամ եկավ հաստատելու, որ Առաքելը շատ ավելի հմուտ նկարիչ է, քան այս ձեռագրի ծաղկողները: Հավանական չենք համարում, որ գուցե մեր ձեռագիրը Առաքելը ծաղկել է ավելի մեծ տարիքում, որով պետք է բացատրել պատկերների անհամաչափութիւններն ու մնացած մանրամասները:

Այսպիսով, ՄՄ10789 ձեռագրում տեսանելի է երկու ծաղկողի ձեռք. երկրորդինն են Ղուկաս Աւետարանչի պատկերը (մանրանկարի խորքը լցուած է ոսկով), անուանաթերթը, որտեղ եւս առատ ոսկի է օգտագործուած եւ որոշ լուսանցանկարներ: Այս ծաղկողի ձեռքը շատ աւելի վստահ է: Ղուկասի Աւետարանի անուանաթերթը Զաքարիայի Աւետման բնագրից յետոյ է, որը նորոգման ընթացքում սխալ փակցնելու հետեւանք է:

Ոճական եւ պատկերագրական համեմատական քննութիւնը ցոյց է տալիս, որ այս ձեռագիրը մեծապէս ազդուել է Վասպուրականի ԺԴ-ԺԵ. դարերի մանրանկարչական դպրոցից, ինչպէս նաեւ նկատելով ակնյայտ ընդհանրութիւնները Բռնաշէնի՝ Նոր Զուղայում պահուող ձեռագրի, նաեւ՝ 1477 թ. Բռնաշէնում Առաքելի ծաղկած Աւետարանի հետ, որը, գուցէ, նախօրինակ է հանդիսացել մեր ձեռագրի համար՝ հաշուի առնելով նաեւ գրչի նոյնութեան հանգամանքը, չենք բացառում, որ մեր օրինակը եւս, Նոր Զուղայի օրինակի նման, գրուել է Բռնաշէնում, որտեղ հիմնականում ընթացել է գրիչ եւ ծաղկող Առաքելի կեանքը եւ աշխատանքային գործունէութիւնը (նկ. 12):



Նկ. 12. Մասնաւոր հավաքածու, Աւետարան, 1477թ., գրիչ՝ Մխիթար, ծաղկող՝ Առաքել, Առաքելի ինքնադիմանկարը

Յանկ Առաքելի գրած եւ ծաղկած ձեռագրերի

	Ձեռագրի Հ ^մ	Գրիչ	Ծաղկող	Ժամանակ	Գրչք. Վայր
1	Վասպ. Հ ^մ 199, սիւն 483-486:	Մխիթար	Առաքել	1478 թ.	Բննաշէն
2	Վասպ. Հ ^մ 210, սիւն 515-516	Առաքել	-----	1490 թ.	Բննաշէն
3	ՄՄ 10789	Առաքել		1490թ. յետոյ	Բննաշէն
4	Ղ. Փիրղ., Նշխարք, Բ., ՄՄ 4515, էջ 236	Առաքել	-----	1494 թ.	Բննաշէն
5	Նոր Ջողայի Ամենափրկիչ, Հ ^մ 76	Ս. Առաքել	-----	1490 թ	Բննաշէն

SEDA MANUKYAN

A SPECIMEN OF THE BĀNASHEN MINIATURE ART

Key words: Bānashen, Moks, Aṙak‘el, Mkhit‘ar, Vaspurakan, Khizan, miniature, Oghak village, Gospel.

The article is dedicated to Ms M 10789. It is a Gospel copied by scribe Aṙak‘el. The manuscript has very interesting miniatures; its marginal decorations contain floral patterns, images of birds, fish, sirens and even temples. Letters with human faces stand out among the ornaments. In addition, there are also marginal miniatures often placed on opposite pages. The stylistic-iconographic analysis shows that this manuscript is significantly influenced by the 14th–15th cc. Vaspurakan culture, especially, the miniature school of Khizan. One can notice similarities with the manuscript from Bānashēn preserved in New Jugha, as well as with the Gospel painted by Aṙak‘el in 1477 in Bānashēn, so it could be the prototype of our manuscript. Taking into account that the scribe of both manuscripts is the same Aṙak‘el, we can conclude that this manuscript was probably written in Bānashēn.

СЕДА МАНУКЯН

ОБРАЗЧИК БРНАШЕНСКОЙ ШКОЛЫ МИНИАТЮРЫ

Ключевые слова: Брнашен, Мокс, Аракел, Мхитар, Васпуракан, Хизан, миниатюра, село Огак, Евангелие.

Статья посвящена рукописи М 10789, Евангелию, скопированному рукой писца Аракела. Рукопись богато декорирована многофигурным орнаментом, растительным узором, изображениями сирен, птиц-рыб, также храмов, буквицами с человеческими лицами, маргинальными миниатюрами, иногда на противоположных страницах. Анализ иконографии доказывает, что на эту рукопись большое влияние оказала Васпураканская школа миниатюры, особенно школа Хизана 14-15 вв. Также замечено сходство с рукописью из Брнашена, хранящейся в Новой Джульфе. Это Евангелие, которое Аракел проиллюстрировал в 1477 году и которое могло быть прототипом для нашей рукописи. Так как писец обеих рукописей тот же Аракел, вероятно, и наша рукопись была написана в Брнашене.

ՍԵԴԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԲՈՒՆԱՇԷՆԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԻ ՕՐԻՆԱԿ



Նկ. 1. ՄՄ 4123, Աւետարան,
1466 թ., Բոնաշեն գիղ, գրիչ՝ Մխիթար



Նկ. 2. Ձեռ. Հմր 76, Աւետարան, 1490 թ., գրիչ՝ Առափէ,
Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրատուն



Նկ. 3. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ.
Կետո, գրիչ՝ Առափէ, Աբրահամի
զոհաբերութիւնը



Նկ. 4. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ. Կետո, գրիչ՝ Առափէ,
Աւետում, 4բ. Մասնատու հավաքածու, Աւետարան,
1477 թ., գրիչ՝ Մխիթար, ծաղկող՝ Առափէ, Աւետում





Նկ. 5. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաֆել, Հոգեգալուստ և Համբարձում



Նկ. 6. ՄՄ 10789, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաֆել, Ծնունդ



Նկ. 7. ՄՄ 4223, Աւետարան, Խիզան, Ծնունդ



Նկ. 8ա. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաֆել, Հարսանիք Կանայրում



Տբ. ՄՄ 5511, Աւետարան, Հարսանիք Կանայրում



Տգ. ՄՄ 4223, Աւետարան,
Հարսանիք Կանայում



Տդ. Մասնատը հավաքածու, Աւետարան, 1477 թ.,
գրիչ՝ Մխիթար, ծաղկող՝ Առաքել
Հարսանիք Կանայում



Նկ. 9. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ.
հետո, գրիչ՝ Առաքել, Ագղարարումն
Երկրորդ գալուստեան



Նկ. 10. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ.
հետո, գրիչ՝ Առաքել, Յարութիւն



Նկ. 11. ՄՄ 10780, Աւետարան, 1490 թ. հետո, գրիչ՝ Առաքել,
լուսանցանկարներ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան 22

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում 40

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ
առևտրում ըստ Ժ.-ԺԴ. դարերի պարսկական և արաբական
պատմաաշխարհագրական երկերի 60

Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի
հրատարակման նախապատմությունը..... 83

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը 93

Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի
գրավոր աղբյուրները..... 113

Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցիև և նրա
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

ԱՐՎԵՍ

Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակները
հայկական մանրանկարներում..... 166

Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը 268

Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների
գործունեության մասին 295

Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների և գրադարանային
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը 321

Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր և
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) 330

Հերմինէ Գրիգորեան

Յուցակ կիսաբունի կիպլէնկէան թանգարանի հայերէն ձեռագրերի 350

ԲԱՆԱՎԵՃ**Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում 377

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Մանեա Էննա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը 420

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ**Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) 432

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 438

CONTENTS

HISTORY

Azat Bozoyan

The Role of Antioch in the Policy
of Levon the Magnificent5

Karen Matevosyan

Anticatholicos Anania of the Sultanate of Rum22

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

Elina Ghazaryan

The Role of South Caucasian Towns
in Transit Trade According to the Persian and Arabic
Historico-Geographical Works of 10th-14th Centuries.....60

Georgi Mirzabekyan

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

Haykaz Hovhannisyan

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

PHILOLOGY

Davit Gevorgyan

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

Donara Karapetyan

The Written Sources of Asar Sebastats‘i’s
Book of Medical Art.....113

Anna Ohanjanyan

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs
of Mush and his Book *Key of Truth*.....131

ART

Avet Avetisyan

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*
in Armenian Miniatures.....166

Seda Manukyan

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

Anna Arevshatyan

Observations on the melodic thinking in
the monodies of the Liturgy in the arrangements
by Makar Yekmalian and Komitas..... 212

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and
His Newly Discovered Poems..... 233

Lusine Tumanyan

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘..... 268

Hasmik Kirakosyan

A Recently Discovered Document about the Activity
of Evangelical Missionaries in Shushi..... 295

Mihran Minassian

A Previously Unpublished List of Diocesan Villages of the
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries
of Pasen and Takht (1861–1866)..... 305

BIBLIOGRAPHY**Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of
Handwritten Remarks and Library Notes in
Armenian Early Printed Books..... 321

Tatevik Manukyan, Knarik Sargsyan

Handwritten and Library Notes of Early Printed Books
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

Hermine Grigoryan

Catalogue of the Armenian Manuscripts of the
Gulbenkian Museum in Lisbon..... 350

DISCUSSION**Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

REPORT**Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

OBITUARY**Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Азат Бозоян	
Роль Антиохии в политике Левона Великого.....	5
Карен Матевосян	
Антикатоликос румского султаната Анания.....	22
Гагик Даниелян	
Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
Элина Казарян	
Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
Георгий Мирзабекян	
Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г.	74
Айказ Оганесян	
Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

ФИЛОЛОГИЯ

Давид Геворгян	
Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
Донара Карапетян	
Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
Анна Оганджян	
Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

ИСКУССТВО

Авет Аветисян	
Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
Седа Манукян	
Образчик брнашенской школы миниатюры.....	199
Анна Аревшатян	
Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмаляна и Комитаса.....	212

ПУБЛИКАЦИИ

- Ани Аракелян**
Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233
- Лусине Туманян**
Гандзы и таги Ованеса Бргутенца 268
- Асмик Киракосян**
Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши..... 295
- Мигран Минасян**
Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

БИБЛИОГРАФИЯ

- Геворг Тер-Варданян**
Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах..... 321
- Татевик Манукян, Кнарик Саргсян**
Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330
- Эрмине Григорян**
Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне..... 350

ДИСКУССИЯ

- Нарине Варданян**
История развития “Армянской Книги канонов”.
Исследование или искажение фактов? 377

СООБЩЕНИЕ

- Манеа Эрна Ширинян**
XXIV всемирный конгресс византинистов..... 420

НЕКРОЛОГ

- Назени Гарибян**
Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 34

BULLETIN OF MATENADARAN

Volume 34

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 34

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/